ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

ՀՀ-ում կոռուպցիայի նվազեցման գործում հրատապ խնդիրներից են տնտեսական և ենթակառուցվածքային բարեփոխումները, հատկապես կոռուպցիայի խորացման պատճառների բացահայտումը և հակակոռուպցիոն հետևողական քաղաքականության իրականացումը՝ սոցիալ-տնտեսական ծանր հետևանքների նվազեցման համատեքստում:

Հարկ է նշել, որ բազմաթիվ հետազոտություններ են կատարվել տարբեր հետազոտողների կողմից, որոնք ուղղված են եղել կոռուպցիայի դեմ պայքարին և հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը, բայց, այնուամենայնիվ, դեռևս կան մի շարք բացթողումներ, որոնք խթանում են կոռուպցիայի զարգացմանը: Հետևաբար, կոռուպցիայի դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել կառավարման արդյունավետ գործիքակազմ, ուղղված՝ պետական կառավարման համակարգում բարեփոխումների իրականացմանը և հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրմանը:

Կառուցվածքային առումով հետազոտությունն իրականացվել է ատենախոսությունում բարձրացված հիմնահարցերի և դրանց հետ կապված խնդիրների լուծման տրամաբանական հաջորդականության ապահովման

սկզբունքով: Նախաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է հակակոռուպցիոն մեխանիզմների առաջացման նախադրյալների և դրանց տեսամեթոդաբանական գնահատման մոտեցումների ուսումնասիրությանը:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվել են հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման ուղղությունները ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ գլխում դիտարկվել են հակակոռուպցիոն մեխանզիմների ֆինանսական ռազմավարության մշակման գերակայությունները և դրանց կիրառման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը պայմանավորված է նրանով, որ դիտարկվող հիմնահարցի համար տեսական հիմք են հանդիսացել կոռուպցիայի և հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ տարբեր տնտեսագետների գրքերը, գիտական հոդվածները, ինչպես նաև՝ ստացված արդյունքների փորձարկումը և կիրառումը:

Ատենախոսությունում հեղինակը ներկայացնում է մի շարք արդյունքներ, որոնցից որպես **գիտական նորույթ** առանձնացնում է հետևյալները՝

1. Բազմագործոն ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելի կիրառմամբ գնահատվել է պետական կառավարման համակարգում պաշտոնատար անձանց եկամուտների վրա ազդող կոռուպցիոն ռիսկերի չափը՝ առանձնացնելով կոռուպցիոն ռիսկի առաջացման դրդապատճառները հակակոռուպցիոն նպատակադրված քաղաքականության իրականացման համատեքստում:
2. Մշտադիտարկման արդյունքների հիման վրա բացահայտվել են ՀՀ-ում դեղագործության շուկայի մասնակիցների վարքագիծը՝ ուղղված կոռուպցիոն գործարքների իրականացմանը, ինչպես նաև մշակվել են հակակոռուպցիոն մեխանիզմի ֆինանսական գնահատման ռազմավարական քայլերը:
3. Հակակոռուպցիոն ռիսկերի ֆինանսական գնահատման արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում կոռուպցիայի, անվանական ՀՆԱ-ի, ժողովրդավարության,

միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապը, ինչպես նաև մշակվել է կոռուպցիայի նվազեցման ձևաչափ՝ ուղղված ՀՀ-ում տնտեսական բարեկեցության բարձրացմանը:

Ատենախոսությունում մշակված մոտեցումները, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն տեսական և գործնական նշանակություն:

Ատենախոսությունը զերծ չէ **դիտողություններից**: Դրանցից կարելի է նշել հետևյալները՝

1. Աշխատանքը առավել շահեկան կլիներ, եթե հեղինակի կողմից միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում առաջարկվեր իրականացնել ՀՀ-ում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման մեխանիզմ ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամուտների և ծախսերի ինքնահայտարարագրման և նրանց կողմից առևտրային բանկերում եկամուտների և ծախսերի քաղվածքների խաչաձև ստուգման արդյունքների:
2. Ատենախոսությունում հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատումը սահմանափակվել է միայն երկու ոլորտների ներկայացմամբ: Սակայն աշխատանքը առավել շահեկան կլիներ, եթե հեղինակը ներկայացներ տնտեսության այլ ոլորտներում, օրինակ՝ շինարարության, մեծածախ առևտրի և ծառայությունների, կոռուպցիոն ռիսկերի առաջացման մեխանիզմները և առաջարկեր դրանց նվազեցման գործնական քայլեր:
3. Ատենախոսության արդյունքները առավելապես ունեն գործնական նշանակություն: Հետևաբար, աշխատանքը առավել շահեկան կլիներ, եթե հեղինակը առավել մեծ ուշադրություն դարձներ ներկայացված եզրույթների ակադեմիական ուղղվածությանը, տարբեր տեսություններին, ինչպես նաև՝ դրանց վերլուծությանը:
4. Ատենախոսության 3.1.1 գծային մոդելում ներառվել են ցուցանիշներ, սակայն անհասկանալի է, թե հեղինակը ինչ սկզբունքով է սահմանափակվել ներկայացնելով ընտրված ցուցանիշները, և թե ինչու չեն ներառվել օրինակ՝ դատական համակարգի գնահատման, բյուրոկրատիայի և աշխարհագրական գործոնները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները, սակայն, չեն ազդում հետազոտության արդյունքների վրա, այլ դրանք հետապնդում են հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրներին նվիրված հետագա աշխատանքների ուղղությունների բացահայտման նպատակ:

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն, որի արդյունքների կիրառումը կարող է նպաստել հանրապետությունում կոռուպցիոն ռիսկերի գնահատմանն ու կրճատմանը:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին է վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են, իսկ ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը:

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Հակակոռուպցիոն մեխանիզմների ֆինանսական գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսությունների համար ներկայացվող այլ պահանջներին, և հեղինակն արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
Տնտեսագիտության թեկնածու,
ՀՀ ԱՆ ՀԿԱԾ Քաղ. սպասարկման բաժնի պետ,
Արդարադատության փոխգնդապետ՝ **Խ.Թ. Իգիթյան**

Պարոն Խ. Իգիթյանի
Ստորագրությունը հաստատում եմ՝
(ՀԿԱԾ Ֆինանսական բաժնի պետ,
արդարադատության գնդապետ)

(ստորագրություն)

03.06. 2022 թ.